Дж. С. КИРАКОСЯН, *А. К. Дживелегов и его историко-публицистическое наследие*, Ереван, изд-во АН АрмССР, 1986, 86 с.

Ջ. Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Ա. Կ. Ջիվելեգովը և նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, 86 էջ։*

Ա. Կ. Ջիվելեգովը պատկանում է հայ մտավորականության այն ներկայացուցիչների թվին, որոնց անվանը հանիրավի սպառնում է մոռացության փոշին, որի հետևանքով ժամանակակից սերունդը տեղյակ չէ կամ գրեթե պատկերացում չունի նրա չափազանց հարուստ ստեղծագործական ժառանգության մասին։ Նրա բազմարնույթ գիտական ժառանգության պատմահրապարակախոսական մասը հայ ընթերցողի համար համեմատաբար անհայտությունից լույս աշխարհ հանելու շնորհակալ գործի նախաձեռնողը եղավ վաստակաշատ պատմաբան, պրոֆ. Ջ. Կիրակոսյանը, որի ղեկին պատկանող ինքնուրույն առարկա աշխատությունը նրա գիտական վերջին նրախտիքն է։

Գրքում Ջ. Կիրակոսյանը հանգամանալից քննության է ենթարկում Ա. Կ. Ջիվելեգովի հարուստ ու բազմարովանդակ կյանքի էջերը և նրա բեղմնավոր ու արդյունաշատ հասարակական-քաղաքական գործունեության տարբեր դրվագները։ Ընդ որում, նա չի սահմանափակվում լոկ գիտնականի կյանքի ու գործունեության հետ կապված անցքերի ժամանակագրական կամ փաստական շարադրանքով, այլ տալիս է նրա կյանքի յուրաքանչյուր փուլի ամփոփ դրնահատականը, նրա գործունեության հայկական հնչողությունը, արժևքավորում Ա. Կ. Ջիվելեգովի ստեղծած արժեքների տեղն ու դերը ինչպես համամարդկային, այնպես էլ հայ մշակույթի պատմության մեջ։

Աշխատության կարևոր արժեքներից է Ա. Ջիվելեգովի գիտական աշխատությունների մատենագրությունը, որն ի մի է բերվել Ջ. Կիրակոսյանի պատմաբանահրատարակչական քրտնաջան աշխատանքի շնորհիվ և որքան մեզ հայտնի է, համահավաք ձևով տպագրվում է առաջին անգամ։

Խոսելով Ա. Ջիվելեգովի գիտական հետաքրքրությունների շրջանակների մասին, Ջ. Կիրակոսյանը ցույց է տալիս, որ ընթերցողը գործ ունի լայն մտահորիզոնի ու ընդգրկումների տեր մի գիտնականի հետ։ Պատմություն, արվեստ, գրականագիտություն, հրապարակախոսություն, թարգմանչական գործունեություն՝ այսպիսին է նրա հետաքրքրությունների բնագավառների ոչ լրիվ թվարկումը։ Հանրագիտական իմացությունը նրան հնարավորություն ընձեռեց աշխատակցելու «Գրանատ» հանրագիտական բառարանին։ Հեղինակը գնահատում է այդ հրատարակությանը նրա քառասունմեկամյա (1898—1939) աշխատակցությունը, որտեղ առկա է նրա խոշոր ներդրումը հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերի լուսաբանության և հատկապես քաղաքական հայագիտության բնագավառում։ Համաշխարհային համբավ ստացած գիտնականը, ինչպես նշվում է աշխատության մեջ, մասնակցել է նաև Ֆրանսիացի պատմաբաններ է. Լավիսի և Ա. Ռամբոյի «XIX դարի պատմություն (Արևմտյան Եվրոպա և արտաևրոպական պետություններ)» նշանավոր աշխատության ռուսերեն հրատարակությանը։ Աշխատության առաջին մասը՝ «Ա. Կ. Ջիվելեգովի կյանքի և հասարակական-քաղաքական գործունեության էջեր» վերնագրով, ավարտվում է Հոկտեմբերյան հեղափոխությանը հետևող առաջին տարիներին գիտնականի գործունեության ամփոփումով։ Վկայակոչելով գիտնականի ուսումնասիրությունների նոր ընթացքը, Ջ. Կիրակոսյանը եզրակացնում է, որ սովետական իշխանությունը նրան հնարավորություն տվեց ըստ ամենայնի բացահայտելու հետաղոտողի և մանկավարժի իր տաղանդը։

Հետագա շարադրանքում Ջ. Կիրակոսյանն անդրադառնում է Ա. Ջիվելեգովի՝ Արևմտյան-Եվրոպայի երկրների պատմության, մշակույթի և արվեստի հարցերին վերաբերող աշխատություններին։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ Ջիվելեգովի մուտքը գիտության մեջ՝ նշանավորվեց միջազգային ճանաչումով։ Այդ մուտքը պատմական գիտության ասպարեզ՝ ողջունեցին ռուսական գիտական մտքի բազմաթիվ կարկառուն ներկայացուցիչներ, ո-

րոնը հանձին երիտասարդ Ա. Ջիվելեգովի, գտան շռայլ տաղանդով օժտված մի գիտնականի։ Հին ու նոր լեզուների տիրապետելը, հանրագիտական բնույթի գիտելիքները, սկզբնաղբյուրների և նյութի փաստական խոր իմացությունը նրան հնարավորություն տվեցին շարադրելու մեծարժեք ուսումնասիրություններ, որոնք արժանի տեղ գտան պատմական գիտության ասպարեզում։ Ջ. Կիրակոսյանը համառոտ, բայց բնութագրական վերլուծությամբ բացահայտում է միջնադարագետ գիտնականի վաստակը եվրոպական քաղաքների, առևտրի, գյուղացիական շարժումների և այլնի գիտական վերարտադրության գործում։ Այս բնույթի աշխատությունները (Городская община в средние века, М., 1902; Средневековые города в Западной Европе, СПб., 1902; Торговля на Западе в средние века, СПб., 1904; Крестьянское движение на Западе. Исторический очерк, М., 1920) գրված են, ինչպես ցույց է տալիս հեղինակը, պրոբլեմների նոր և խորապես գիտականորեն հիմնավորված լուծումներով։ Ա. Ջիվելեգովի հետազոտություններին հատկանշական՝ սոցիալական, հասարակական ու քաղաքական հանգուցավորված խնդիրների համադրումը նրան հնարավորություն տվեց լուրջ խոսք ասելու ընդհանուր պատմության այլ բնագավառներում։ Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն նշում է, որ Ջիվելեգովը, որպես մշակույթի և արվեստի խոշորագույն հետազոտող, էլնում է, առաջին հերթին, մշակույթի պատմության տեսանկյունից։ Ընդ որում, աշխատության մեջ հիմնավորվում է Ջիվելեգովի բերած նորույթի գիտականությունն ու ներդրումը, այն, որ գիտնականը դրան է հասել միջնադարյան մշակույթի նյութական հիմքերի խոր իմացությամբ և նյութի շարադրման յուրահատուկ վարպետությամբ։ Վերածնության դարաշրջանին և նրա գործիչներին նվիրված իր աշխատություններում, ինչպես հստակ երևում է Ջ. Կիրակոսյանի շարադրանքից, նա առաջին պլան է մղել միջնադարյան կապանքներից անհատի ազատագրման ընթացքը՝ որպես սոցիալական արմատներից շարունակաբար սնվող գաղափարների զարգացման պրոցես։ Այս տեսանկյունից էլ Ջիվելեգովը դիտարկում է միջնադարյան քաղաքային մշակույթի ինքնությունը այդ թեմայով գրած աշխատություններում (Начало итальянского Возрождения (Научно-популярная библиотека. Серия 1, № 3—4), М., 1908; Очерки итальянского Возрождения. Кастильоне-Аретино-Челлини, М., 1929; Данте Алигьери, М., 1933; Леонардо да Винчи, М., 1935; Микеланджело, М., 1938 և այլն)։

Աշխատության վերջին հատվածում Ջ. Կիրակոսյանը ներկայացնում է Ա. Կ. Ջիվելեգովի դիտահրապարակախոսական գործունեությունը հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերի լուսաբանման, հատկապես քաղաքական հայագիտության բնագավառում։ 1906 թ. լույս տեսավ նրա «Армяне в России» գիրքը, քաղաքական հայագիտության ուղղությամբ առաջին հրապարակումը։ Թեև գրքում խոսքը հիմնականում վերաբերում է Հայաստանի արևելյան հատվածին, սակայն ըստ ամենայնի բարձրացվում են նաև արևմտահայության խնդիրները։ Հիրավի, այս աշխատության մեջ հեղինակը դրսևորում է հայկական հարցի փայլուն իմացություն։ Ընթերցողի առջև նա հառնում է որպես իր ժողովրդի հարազատ զավակը, նրա հոգևորով ու տառապանքներով ապրող, նրա ապագայի նկատմամբ հաստատուն հավատով լեցուն մտավորական։ Ջ. Կիրակոսյանը բարձր է գնահատում գիտնականի մյուս՝ «Будущее Турецкой Армении» (1915) մենագրությունը, որպես հայկական հարցի դիվանագիտական պատմությանը նվիրված հետազոտություն՝ գրված իրազեկ հեղինակի կողմից։ Նա հատուկ ուշադրություն է դարձնում Ա. Ջիվելեգովի արևմտահայերի ինքնավարության իրավունքի գաղափարի պաշտպանության և այն հիմնավորող փաստարկներին։ Ա. Ջիվելեգովը համոզմունք էր հայտնում, որ ինքնավար Հայաստանի ստեղծումը կլուծի նաև աշխարհասփյուռ հայության հայրենադարձության պրոբլեմը, որովհետև արտագաղթած հայությունը կվերադառնա հայրենիք՝ համայն հայության փրկության խարիսխը։

Գրքում Ջ. Կիրակոսյանը առանձնահատուկ տեղ է հատկացնում Ա. Ջիվելեգովի գործունեությանը՝ «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթում, որպես նրա կազմակերպիչներից մեկի և այս խմբագրի։ Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է այդ պարբերականի նյութերը և եզրակացրել, որ շաբաթաթերթում Ա. Ջիվելեգովն իր գրիչը ի դաս է դրել ցեղասպանությունից հրաշքով փրկված և Ռուսաստանում բնավորված հայության անասելի ծանր վիճակը թեթևացնելու գործին։ Հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ Ա. Ջիվելեգովի երախտիքը այն էր, որ նա իր հեղինակությամբ և անձնական հմայքի շնորհիվ կարողացավ շաբաթաթերթի շուրջ համախմբել ռուս այն մտավորականության ներկայացուցիչներին, որոնք իրենց դողոջի ձայնը բարձրացրեցին թուրքական բարբարոսությունների դեմ։

Գրքում վերլուծվում են այս թեմատիկայով գիտնականի գրած հոդվածները։ «Հայաստանի ճակատագիրը» հոդվածում նա հանրության ուշադրությունն էր հրավիրում XX դ. առաջին ցեղասպանության վրա և զայրույթով դատապարտում այն։ Ա. Ջիվելեգովը 1915 թ. ջարդերը համարում է ցեղասպանություն։ Այդ ջարդերի մեջ նա տեսնում էր որոշակի «համակարգ», «մեթոդայնություն», «ծրագրավորվածություն ու պլանաչափայնություն»։

Ջ. Կիրակոսյանը հանգամանորեն քննում է Ա. Ջիվելեգովի «Ջիվելեգովյան Հայաստանի» և «հայրենասիրաբար տրամադրված ռուս մարդկանց անբավականության մասին», «Ենթուրանիզմը և Հայաստանը» ու այլ հոդվածներ, որոնք վերաբերում են արևմտահայերի ազգերդության, հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքական կառավարության գաղափարական ու քաղաքական ծայրահեղորեն հետադիմական ուղեգծին։ Հեղինակն ուրվագծել է Ա. Ջիվելեգովի նպատակասլաց գործունեությունն «Արմյանսկի վեստնիկում», ցույց տվել, որ այնտեղ տպագրված նյութերն իրենց ոգի բազմազանությամբ հանդերձ կազմում էին մի որոշակի ամբողջություն, պատկերացումների և գործողության հանրագումար՝ ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի ճակատագիրը մեղմելու համար։ Ուշադրություն է դրավում Ա. Ջիվելեգովի քաղաքական սթափ դիրքորոշումը ռուս առաջավոր մտավորականության նկատմամբ։ Ներկայացվում է նրա խորապես հիմնավորված տեսակետը՝ այն, որ ռուս մտավորականությունը միշտ էլ հանդես է եկել փոքր ժողովուրդների ինքնորոշման օգտին և որ տրվյալ դեպքում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը լիովին համապատասխանում է Ռուսաստանի այդ լավագույն զավակների գաղափարներին։

Իր մյուս «Ենթուրանիզմը և Հայաստանը» հոդվածում Ա. Ջիվելեգովը անդրադառնում է երիտթուրքերի պաշտոնական գաղափարախոսության՝ պանթուրքիզմի հարցերին։ Պանթուրքիզմի գաղափարական մերկացումը և դատապարտումը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, Ա. Ջիվելեգովի գրչի տակ ուներ քաղաքական հրատապ նշանակություն։ Այս առթիվ բացահայտվում են հարցի շիվելեգովյան բմբռնման պատմականորեն հիմնավորված մտագրությունները. պանթուրքիզմի ու ենթուրանիզմի քաղաքական նպատակն է Թուրքիայի շուրջ միավորել թուրքալեզու ժողովուրդներին, ուստի թուրքական քաղաքականության վերջնական նպատակն է արմատախիլ անել հայ ժողովրդին, որը սեպի պես խրված է Թուրքիայի և Թուրանի միջև ու քաղաքական մղձավանջ է Թուրքիայի համար։ Դրանով Ա. Ջիվելեգովը բացահայտում էր հայ ժողովրդին բնաջնջելու հրեշավոր ծրագրի նպատակը, որի կենսագործմանը երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ 1915—1918 թվականներին։ Ա. Ջիվելեգովի այս մտահանգումները հիմնավորում են իր գլխավոր թեզը, որի համաձայն, ենթուրանիզմի դաղափարը վաղ թե ուշ, առավել կամ պակաս չափով սպառնալիք կդառնա Ռուսաստանի պետական ու քաղաքական շահերին, և որ անհրաժեշտ է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտային չլատելու այդ վնասակար ու վտանգավոր շարժման միտումները։ Այս կապակցությամբ Ջ. Կիրակոսյանը նկատում է, որ Ա. Ջիվելեգովի պատկերացումներն ունեն հրատապ նշանակություն և հարվածում են հայ ժողովրդի ցեղասպանության փասը ժխտող թուրքական կեղծարարներին ու նրանց ամերիկյան հովանավորներին։ Ա. Ջիվելեգովի խոսքերը, եզրափակում է Ջ. Կիրակոսյանը, «կոչ են անում աշխուժության, ուշադրության՝ այսօրվա թուրքական նեոֆաշիստների արկածախնդրական պլանների նկատմամբ» (էջ 56)։

«Արմյանսկի վեստնիկը» բնութագրելիս Ջ. Կիրակոսյանը վերհանում է այդ շաբաթաթերթի մի շատ կարևոր առանձնահատկություն. գիտնական-խմբագիրը նրա շուրջ էր համախմբում շատ երկրների ներկայացուցիչների, մշտապես հետևում հայկական հարցի և դրանում նշվող իրադարձությունների ընթացքին։ Բացահայտվում է Ա. Ջիվելեգովի քաղաքական հրապարակախոսության մի էական գիծը՝ երիտթուրքական կուսակցության պարագլուխների շարագործությունները մերկացնել հիմնականում ականատես-արտասահմանցիների վկայություններով։

Աշխատության հետագա շարադրանքում ներկայացվում է հայրենասեր գիտնականի այրուձ դրաման հայկական հարցի քաղաքական վայրիվերումների ընթացքում։ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ա. Ջիվելեգովը հույսեր էր փայփայում, որ վերջապես հայկական հարցը կստանա իր արդարացի լուծումը։ Արևմտահայաստանի համար նա ակնկալում էր քաղաքական ինքնորոշման իրավունք։ Սակայն գիտնականին դառն հուսախաբություն էր սպասում։ 1917 թ. հուլիսին Սերասպիայում կազմակերպված հայկական արյունոտ ջարդի լուրը ցնցեց նրան։ Ա. Ջիվելեգովը ցասումով դատապարտեց թուրքական կառավարության այդ նոր բարբարոսական արարքը և հայտնեց այն կարծիքը, որ իրեն հեղափոխա-

կան հորդորած ռուսական ժամանակավոր կառավարությունը պարտավոր է պաշտպան կանգնել արևմտահայությանը։ Նա կարծում էր, որ Հայաստանի մանդատը պետք է հանձնվի Ռուսաստանի հանրապետությանը։ Սակայն ժամանակավոր կառավարությանն ուղղված Ա. Ջիվելեգովի կոչերը մնացին անարձագանք։ Գրքում ցույց է տրվում, որ անեքսիաների հակաժողովրդական քաղաքականություն շարունակող կառավարությունը ի վիճակի չէր հարգել հայ ժողովրդի արդարացի պահանջները։ Ա. Ջիվելեգովին խորապես դառնացնում էր նաև այն իրողությունը, որ հայ ժողովրդի ազգային շահերի նկատմամբ կրկին անտարբեր ու անհաղորդ մնացին նաև իմպերիալիստական տերությունները։

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սովետական կառավարությունը հռչակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը։ Ա. Ջիվելեգովը ողջունեց այն և «Արմյանսկի վեստնիկում» տպագրեց դրա բովանդակությունը։ 1918 թ. վրա հասած նոր իրադարձությունները, հատկապես երիտթուրքական կառավարության ձեռնարկած հակասովետական ինտերվենցիան Անդրկովկասում ծանր հարված հասցրին հայ ժողովրդի երազանքներին։ Այդ պահը Ա. Ջիվելեգովը գնահատեց որպես «ճգնաժամային»՝ հայ ժողովրդի պատմության մեջ, որովհետև վերստին դրված էր նրա լինել-չլինելու հարցը։ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծումը նոր հույսեր արթնացրեց ակնավոր գիտնականի մեջ՝ իր ժողովրդի ապագայի նկատմամբ։ Աշխատության վերջում կցված՝ նրա ուսումնասիրությունների ցանկից բավականաչափ պատկերացում կարելի է կազմել այն մասին, որ 1920-ական թվականներից ի վեր, մինչև իր մահը՝ 1952 թ., Ա. Ջիվելեգովը ինչպիսի խոշոր ներդրում է արել սովետական գիտության զարգացման մեջ։ Դրա բացահայտումը քաղաքացու և գիտնականի կյանքի և գործունեության թեկուզ ե ընդհանրական հենքի վրա՝ գրախոսվող աշխատության բուն արժանիքն է։ Հիրավի, Ջ. Ս. Կիրակոսյանի սույն աշխատությունը լայնահուն ուղի է բացում կարկառուն գիտնականի վաստակի հետագա ժողովրդականացման գործում։

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր